Հաստատում եմ

Տնօրեն՝ _____ /Հ. Գրիգորյան/

«25» սեպտեմբեր 2022թ.

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

Ղազարեի Մոզանյանի անվ. IX դպր.

ուսումնական հաստատության անվանումը, դասարան

Հեմազյան հիրուշ Լուսինյան,

դասղեկի ազգանունը, անունը, հայրանունը

«2022-2023» ուս.տարի

Կրթական-դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

1. Ներածություն (դասարանի ընդհանուր բնութագիրը)

IX դասարանում սովորում է 10 աշակերտ, որից 5 տղա, 5 աղջիկ: Գերազանցիկ չկա, թույլ աշակերտ նույնպես չկա: Մեծ ցանկության դեպքում կարող են հասնել ավելիին: Նրանք կապված են սերտ ընկերական հարաբերություններով, հարգում են միմյանց, գնահատում և հաշվի են նստում յուրաքանչյուրի կարծիքի հետ, օգնում դրա կարիքն ունեցողին: Մասնակցում են համադպրոցական միջոցառումներին: Հարգալից վերաբերմունք ունեն ուսուցիչների հանդեպ:

2. Ուսումնադաստիարակչական նախատեսվող աշխատանքներն ուսումնական տարվա ընթացքում

ա/ Ծանոթացնել կորոնավիրուսային հիվանդության պայմաններում հանրակրթական ուսումնական հաստատություններում գործունեության կազմակերպման ընդհանուր կանոններին, կատարել կազմակերպչական աշխատանքներ, հետևել համաճարակային ընդհանուր հիգիենիկ կանոնների պահպանմանը:

բ/ Աշակերտներին ապահովել դասագրքերով:

գ/ Հետևել կարգապահությանը, դասաժամերին լիարժեք մասնակցությանը:

դ/Կարևորելով միջանձնային հարաբերությունները՝ ամրապնդել փոխհարաբերությունները:

ե/ Նպաստել առաջադիմության և ինքնավստահության բարձրացմանը:

զ/ Մղել ինքնակրթության, խրախուսել լավ սովորող և կարգապահ աշակերտներին:

է/ Դաստիարակել բարի, ազնիվ, արդար, հարգալից, ընկերասեր, հայրենասեր, հանդուրժող քաղաքացի և անհատ:

ը/Ապահովել աշակերտների մասնակցությունը տարաբնույթ մրցույթներին:

3. Հայեցի դաստիարակություն

3.1.Հոգևոր դաստիարակություն

ա/ Սովորողներին հաղորդակից դարձնել հայ ժողովրդի պատմական անցյալին, մշակութային ժառանգությանը, հոգևոր արժեքներին:

բ/ Լուսաբանել հայ առաքելական եկեղեցու էությունը, զերծ պահել աղանդներից:

գ/ Կարևորել քրիստոնեության դերը մարդկային դրական հատկանիշների ձևավորման մեջ:

3.2. Գեղագիտական դաստիարակություն

ա/ Ճիշտ կողմնորոշել գեղեցիկի ընկալման հարցում՝ անցկացնելով զրույցներ արվեստի տարբեր ճյուղերի և արվեստագետների մասին:

բ/ Ձևավորել գեղագիտական ճաշակ՝ կինոյի, թատրոնի, երաժշտության, նկարչության միջոցով:

գ/ Բացահայտել տաղանդավոր աշակերտներին:

3.3. Ռազմահայրենասիրական դաստիարակություն

ա/ Ձևավորել հարգալից վերաբերմունք պետության և պետական խորհրդանիշների նկատմամբ:

բ/ Բացատրել, որ հայրենիքը սկսվում է տնից, հետո հասնում սահման, որ մեր պետության յուրաքանչյուր քաղաքացի զինվոր է՝ անկախ սեռից:

գ/ Ուժեղ պետություն ունենալու հիմքում հզոր բանակ ստեղծելու անհրաժեշտության գիտակցում:

դ/ Սովորեցնել գնահատել պետություն պահողներին, հոգ տանել հայրենիքին կյանք ու առողջություն նվիրած հերոսների ընտանիքներին:

3.4. Ֆիզիկական դաստիարակություն

ա/ Տալ սեփական առողջության մասին հոգ տանելու ձևերը՝ օրգանիզմի կոփում, դիմադրողականության բարձրացում, ճիշտ կեցվածք, ուժի զարգացում:

բ/ Ֆիզիկական պատրաստվածությունն առողջության ամրապնդման գրավական լինելու գիտակցության զարգացում:

գ/ Ուղղորդել առողջ ապրելակերպի:

3.5. Աշխատանքային դաստիարակություն

ա/ Զնավորել հարգանք ցանկացած աշխատանքի նկատմամբ:

բ/ Սերմանել աշխատասիրություն և պատասխանատվության զգացում հանձն առնված աշխատանքի հանդեպ:

գ/ Սահմանել ամենօրյա հերթապահություն, անցկացնել շաբաթօրյակներ:

3.6. Բնապահպանական դաստիարակություն

ա/ Կարևորել բնության դերը մարդու կյանքում և մարդու դերը՝ բնությունը պահպանելու հարցում:

բ/ Մշակել բնության բարիքներից ճիշտ օգտվելու կանոններ:

գ/ Զնավորել սեր և հոգատար վերաբերմունք բնության յուրաքանչյուր մասնիկի հանդեպ:

4. Դպրոց-ընտանիք կապը

ա/ Անհրաժեշտության դեպքում ծրագրված ծնողական ժողովներից դուրս հաճախակի կապ պահպանել ծնողների հետ:

բ/ Ծնողներին ևս ներգրավել դպրոցական և արտադպրոցական միջոցառումների մեջ:

գ/ Ապահովել դասավանդող ուսուցիչ-ծնող կապը:

Ուսումնադաստիարակչական աշխատանքների հիմնական բովանդակությունը

Ուսում. շաբաթ	Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը	Կատար-ման ժամկետ	Կատարողներ
1	Կազմակերպչական հարցեր. ավագի ընտրություն, հերթապահության սահմանում, պարետի սահմանած կանոնների ծանոթացում		դասղեկ, աշակերտներ
2	Պատասխանատվության զգացում		դասղեկ, աշակերտներ
3	Ազատ, անկախ հայրենիք		դասղեկ, աշակերտներ
4	Պատերազմի չարիքները		աշակերտներ, դասղեկ
5	Ուսուցչի կերպարը՝ որպես օրինակ		աշակերտներ, դասղեկ
6	Մեր հին ու նոր մայրաքաղաք Երևան		դասղեկ, աշակերտներ
7	Պետությունների շահերի համընկնում և բախում		դասղեկ, աշակերտներ
8	Վատ սովորություններ. ինչպես պայքարել դրանց դեմ		դասղեկ, աշակերտներ
9	1988թ.-ի երկրաշարժը և դրա հետևանքները		դասղեկ, աշակերտներ
10	Դառն է ճշմարտությունը, ինչպե՞ս նայել նրա աչքերին		աշակերտներ, դասղեկ
11	Ինչպես պաշտպանվել վիրուսներից		դասղեկ, աշակերտներ
12	Ի՞նչ եմ ուզում դառնալ, իմ ընտրած մասնագիտությունը		դասղեկ, աշակրտներ
13	Ո՞վ է իսկական ընկերը. փոխըմբռնում		դասղեկ
14	Ուժի, փառքի և անմահության կրողները		դասղեկ, աշակերտներ
15	Առաջին կիսամյակի արդյունքների ամփոփում		դասղեկ, աշակերտներ

16	Այս տարվա Ամանորը		դասղեկ, աշակերտներ
17	Նոր կիսամյակի կազմակերպչական հարցեր, ծրագրեր		դասղեկ, աշակերտներ
18	Քրիստոնյա Հայաստան		դասղեկ, աշակերտներ
19	Գիրք նվիրելու օր – ընթերցանության դերը մեր կյանքում		դասղեկ, աշակերտներ
20	Գարունդ հայերեն է գալիս		դասղեկ, աշակերտներ
21	Կյանքի և բնության զարթոնք՝ գարուն		դասղեկ, աշակերտներ
22	Կանանց և տղամարդկանց իրավահավասարություն կա՞, թե՞ չկա		դասղեկ, աշակերտներ
23	Շրջապա՞տ, թե՞ ընտանիք. ո՞րն է առաջնայինը մարդու դաստիարակության հարցում		դասղեկ, աշակերտներ
24	Մայրության և գեղեցկության տոն		դասղեկ, աշակերտներ
25	Նորագույն տեխնոլոգիաների դրական և բացասական կողմերը		դասղեկ, աշակերտներ
26	Հայոց մեծ եղեռնը		դասղեկ, աշակերտներ
27	Աշխատանք և աշխատասիրություն		դասղեկ
28	Մայիսյան հերոսամարտեր		դասղեկ, աշակերտներ
29	Սպորտ՝ նորաձևությո՞ւն, թե՞ առողջության գրավական		դասղեկ, աշակերտներ
30	Ո՞վ է որոշում գեղեցկության չափանիշները		դասղեկ, աշակերտներ
31	Մարդկային արժեքները		դասղեկ, աշակերտներ

32	Ինչպե՞ս է արտահայտվում մարդու ինքնուրույնությունը		դասղեկ, աշակերտներ
33	Իմ ձեռքբերումներն այս ուսումնական տարում		դասղեկ, աշակերտներ
34	Ուսումնական տարվա ամփոփում		դասղեկ